



ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ



տար ու հեռավոր երկրներից մեկիկ—մեկիկ իրենց լուսաշող հայրենիքն են ժամանում հայրենադարձ հայերի 1947 թվի Բարավանները: Գալիս են նրանք Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի երկրներից՝ Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Հունաստանից, Ֆրանսիայից, գալիս են հարազատ Սովետական Հայաստանում, հայրենի հողի վրա իրենց երջանիկ կյանքը կոխելու: Անհուն է երջանկությունը հայրենադարձների. ու հայրտ են նրանք, որ շուտով հնարավորություն պիտի ունենան իրենց մասնակցությունը բերելու հայրենիքի վերաշինության, հետպատերազմյան հնգամյա պլանի կենսագործման աշխատանքներին. նրանք պատրաստ են հայրենիքում գտնվող իրենց եղբայրների ու քույրերի հետ միասին ձեռն-ձեռքի տված նորանոր բարձունքներ նվաճելու ժողովրդատրեմեսությունը, զիտությունը ու արվեստի բնագավառներում:

Իրավագուրկ ապահովագրու վիճակում տարիներ շարունակ դեզերել են նրանք օտար ու հեռավոր հորիզոնների տակ՝ հայրենիքի ջերմ կարոտը սրտներում, իսկ այսօր իրականացել են նրանց վաղեմի երազները, նրանք արդեն իրավահավասար սովետական քաղաքացիներ են՝ գուրգուրանով ու հոգատարությամբ շրջապատված: Սովետական Հայաստանի կառավարությունը, ժողովուրդը ամենամեծ նվիրվածությամբ աշխատում են հայրենադարձ եղբայրների ու քույրերի համար ստեղծել ամենայն դյուրություններ, որ պեսզի նրանք հայրենի հարազատ հողի վրա իրենց կենսախինդ կյանքը կերտել կարողանան:

Սփյուռքի հայրենաբաղձ հայությունն անդէ

լայնարձակ բացվել են դռները Սովետական Հայաստանի և սփյուռքի հայրենազնիւր հայությունը աշխատում է օր առաջ հայրենիք մեկնել: Անցյալ տարվանից սկսած լայն ծավալ է ընդունել զանգվածային ներգաղթը. էրե անցյալ տարի հայրենադարձների թիվը տասնյակ հազարներով էին հաշվում, ապա այսօր նրանց թիվը արդեն անցել է հարյուր հազարից ու դեռ Բանի՝ Բանի՝ հարյուր հազար հայեր հայրենիքի սիրուց տոշորված սրտերով ակնդետ սպասում են իրենց հերթին՝ հայրենիք մեկնելու համար: Ամերիկայում վերջերս գումարված Համաշխարհային Հայկական Կոնգրեսում Ա. Միքեհանյանը հետևյալ ձևով է բնութագրել հայրենիք մեկնելու գորեղ ցանկությունը. «Այսօր արտասահմանի մեջ առնվազն հինգ հարյուր հազար հայեր կան, որոնք պատրաստ են և ցանկացող ամսիչապես Հայաստան երթալու. էրե բոլորի միաժամանակ ներգաղթելը հնարավոր ըլլաւ»:

Գծրախտաբար բոլոր ցանկացողների միաժամանակ ներգաղթը դեռ հնարավոր չէ. սակայն հուսով ենք, որ սփյուռքի ողջ հայությունը կարժանանա հայրենիք ներգաղթելու, հայրենիքում համախմբվելու բախտին: Հայրենադարձությունը զանգվածային բնույթ ունի ու մոտ ապագայում մի շարք հայկական գաղութներ քերես կդադարեն գոյություն ունենալ:

Աշխարհի բոլոր ծագերը հայ ժողովրդի հողմացրիվ լշված հատվածները, չնայած իրենց աստանդական վիճակին, հեռավոր գաղութներում անգամ ստեղծել են մշակութային օջախներ. տաղանդավոր հայ ժողովրդի զավակները օտար երկնակամարի տակ, հայրենիքից հեռու, բայց նրա սիրով

տագորված, բարձրաժեշտ գործեր են արտադրել: Բացի դրանից, հայ ժողովրդի բռնի կերպով իր հայրենիքից վտարված ու հողմացրիվ աշխարհի բոլոր կողմերը ցրված հատվածները մեծ զոհողությունների գնով փրկել ու արտասահմանյան երկրներն են տարել բազմաթիվ մշակութային արժեքներ, որոնք մեծ նշանակություն ունեն հայ ժողովրդի մշակույթի ու պատմության ուսումնասիրության համար:

Հայ ժողովուրդը պետականությունից զուրկ լինելով անգործ է եղել բազմաթիվ մշակութային արժեքներ փրկելու կորստից, ի մի հավաքելու. բացակայել են բանգարաններ, բացակայել է բանգարաններ կազմակերպող ձեռքը. բացառություն է կազմել էջմիածնի Մատենադարանը, ուր գլխավորապես կենտրոնացվել են հայ ձեռագրերը: Թանգարանների բացակայության պատճառով հայ մշակույթի շատ արժեքներ երկրից դուրս են տանվել ու օտարների ձեռքն են ընկել. աշխարհի բազմաթիվ բանգարաններում կարելի է հանդիպել հայ մշակույթի արժեքների, որոնք օտարների ձեռքն են ընկել գանազան ճանապարհներով. որոշ բախտախնդիր մարդիկ պատեն առիթներից օգտվելով շահադիտական նպատակներով օտարներին են վաճառել ժամանակավորապես իրենց տրամադրության տակ գտնվող հայ մշակույթի գանձերը. դեպքեր են եղել, երբ եկեղեցին կամ վանքը իր պարտքերը մարելու համար օտարներին է վաճառել մեծաթեփ հայ ձեռագրեր ու այլ հազվագյուտ իրեր. դեպքեր են եղել, երբ անպատասխանատու անձինք հափշտակել են մեր վանքերում ու եկեղեցիներում սրբոքյամբ պահվող ձեռագրերն ու վաճառել օտարներին. շատ դեպքերում էլ անգիտության հետևանքով այս կամ այն անձինք օտարներին են վաճառել իրենց հայրենիքից ժառանգություն մնացած մշակութային բանկազին արժեքները. երբեմն էլ կարիքից զրկված որոշ անհատներ ստիպված են եղել օտարներին վաճառել այդպիսի, ֆանի որ մեզ մոտ բացակայել է գեման միջոցով դրանք ի մի հավաքելու ու պահպանելու գործը: Պետական կյանքով ապրող շատ ազգեր անցյալում նույնպես բանգարաններ չեն ունեցել, սակայն նրանց մեծահարուստներից ռման սովորություն են ունեցել գեման ճանապարհով իրենց ապարաններում կենտրոնացնելու արվեստի ու մշակույթի ունիկումային արժեքներ. այս հավաքածոների բազայի վրա էլ հե-

տագայում առաջ են եկել խոշոր բանգարաններ: Հայ մեծահարուստները դժբախտաբար այդ սովորությունը չեն ունեցել և յիակատար անտարբերություն ցուցաբերելով հայ արվեստի ու մշակույթի գանձերի նկատմամբ, այդպիսի չեն գնել ու հավաքել իրենց ապարաններում, մինչդեռ օտարները հարպիկ գտնվելով երկրից դուրս են տարել դրանք:

Փոխվել է այժմ դրությունը. — երբ մի ժամանակ մեր հայրենիքի մեծ մասը արյան ու վշտի անհուն մի ծով էր ներկայացնում և այնտեղ արտագաղթն էր իշխում տիրաբար, ապա այսօր մեր հայրենիքի մի մասը՝ նվիրական Արարատի ստորոտում, շնորհիվ սովետական կարգերի, երջանիկ ու ստեղծագործ կյանքի դրախտավայրի է վերածվել ու սփյուռքի բոլոր ծայրերից այստեղ՝ Սովետական ազատ Հայաստանում են համախմբվում մեր պսնդոլիտ, հայրենաբաղձ եղբայրներն ու հույրերը: Հայ ժողովրդի արևմտյան հատվածի երբեմնի գանգվածային արտագաղթը հայրենի երկրից փոխարկվել է գանգվածային երջանկաբեր ներգաղթի դեպի իր սովետական հայրենիք, ուր շտեմված վերելք է ապրում ժողովրդատնտեսությունը, ուր ծաղկում ու փրթում են գիտությունն ու արվեստը:

Հայրենի երկրում ստեղծվել են բազմաթիվ մշակութային օջախներ. ի րիվս դրանց ստեղծվել են նաև հոյակապ բանգարաններ, որ չի ունեցել հայ ժողովուրդը երբևէ: Այսօր հայրենիքում մենք ունենք ամբողջ աշխարհում իր տեսակի մեջ եզակի հանդիսացող մի գրադարան, մեր ազգային պաճառն էր կազմող Մատենադարանը, ուր ժողովված են տասնյակ հազարից ավելի ձեռագրեր, ու օրեցօր անում է դրանց րիվը: Այսօր ունենք Հանգույնի գրադարան, որ Սովետական Միության ամենախոշորագույն գրադարաններից մեկն է հանդիսանում և որի գրքերի ֆոնդը միլիոնների է հասնում: Ունենք հայ նյութական կուլտուրայի պատմության ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեցող բարձրաժեշտ նմուշներով հարուստ Պատմական բանգարան, ունենք հայ ու օտար արվեստագետների սֆանջիլի ստեղծագործական կտավներով հստատա հոյակապ Կերպարվեստի բանգարան և այլ բանգարաններ:

Այդ բանգարանները հարստանում են հաև սփյուռքից դեպի հայրենիք հոսող բարձրաժեշտ նմուշներով: Մեր հայրենադարձ եղբայրներն ու հույրերը իրենց հետ հայրենիք են բերում ու բանգարաններին նվիրում բազմա-

քիվ արժեքավոր իրեր, որոնք մեծ արժեք են ներկայացնում հայ արվեստի ու նյութական մշակույթի պատմության համար: Շատ է հաս-
այն հայրենասերների քիվը, որոնք հայրենիք
ներգադրելու համար իրենց հերթին սպա-
սելով, շտապում են օր առաջ հայ մշակույթի
հետ աղբընտրություն ունեցող իրենց տրամա-
դրության տակ եղած արժեքները հայրենիք
տեղափոխել: Քերենք մի երկու օրինակ.—
Տեր-Ղազարյանը Հայաստանից եկել է ու-
ղարիկ Ամիր Դովլաթի բժշկարանի ձեռագիր-
քը, ռումինականները արվեստի արժեքավոր
կտավներ են եկել Կերպարվեստի քանդա-
րանին, ռումինական խոջա Հարությունը
Հանրային գրադարանին եկել է ուղարկել
արժեքավոր գրքեր, մեծանուն նկարիչ էդգար
Շահինը իր օֆորտների ժողովածուն եկել
է Կերպարվեստի քանդարանին, արվեստա-
գետ Ֆետվանյանը Հայաստանի Պետական
քանդարանին է եկել իր նկարչական մե-
ծարժեք գործերը, Սիրիայից ու Լիբանանից
վերջերս հայրենիք ժամանած մեր եղբայր-
ներն ու փոքրերը Պատմական քանդարանի
համար եկել են բերել 12-13-րդ դարերի
հազվագյուտ դրամների մի արժեքավոր ժո-
ղովածու, որը պարունակում է 92 զանազան
ձևի 120 դրամ, նիմնականում Կիլիկիայի
հայկական պետության դրամներ, և այլն և
այլն:

Սակայն հայ մշակույթի արտասահմանում
գտնվող արժեքների կենտրոնացումը Սովե-
տական Հայաստանում, մեր սիրապուն հայ-
րենիքում, դեռ տարերային ու պատահական
բնույթ է կրում. անհրաժեշտ է, որ ինչպես
արտագաղթն է փոխվել ներգաղթի, այնպես
էլ հայ մշակույթի հրաշքով փրկված զանգերի
արտահոսը փոխարկվի ներհոսի. հայ մշա-
կույթի, արվեստի, սփյուռքով մեկ ցրված
բազմապիսի արժեքները պետք է կազմա-
կերպված ձևով հայրենիք տեղափոխվեն ու

կենտրոնացվեն հայրենի հոյակապ քանդա-
րաններում: Հայ ազգը բարձրարժեք մշա-
կույթ է ստեղծել, նրա տաղանդավոր արվես-
տագետ զավակներից շատերը հայրենի ա-
փերից հեռու, օտար երկնակամարի տակ ար-
վեստի սմանչելի երկեր են արտադրել: Բա-
վական է որքան հայ արվեստի ու մշակույթի
զանգերը օտարների քանդարանները զար-
դարեցին, այժմ հայրենի հարազատ հողի
վրա մենք ունենք մեր ազգային քանդարան-
ները և հայ արվեստի, մշակույթի հետ ամե-
նադույզն անգամ աղբընտրություն ունեցող ար-
ժեքները սրանց սեփականությունը պիտի
կազմեն, սրանց հոյակերտ սրահները զար-
դարեն:

Հայ արվեստի, մշակույթի արժեքների
կազմակերպված հայրենիք տեղափոխմանը
պետք է ձեռնամուխ լինեն արտասահմանի
հայ հոգևորականությունը և հայ առաջադեմ
կազմակերպությունները: Մենք հույս ունենք,
որ ինչպես «Սասունցի Դավիթ» տանկային
շարայան համար կատարված հանգանա-
կությանը և ներգաղթի մեծ ու սրբազան գոր-
ծի կազմակերպմանը իրենց մասնակցությու-
նը բերին արտասահմանի հայ հոգևորակա-
նությունն ու հայ առաջադեմ կազմակերպու-
թյունները, այս խնդրում ևս նրանք կգտնվեն
իրենց կոչման բարձրության վրա ու իրենց
ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցնե-
րով կօժանդակեն նրա իրականացմանը: Հայ
հոգևորականությունը հայատնության զգաց-
մունքով է լցվում ի տես աշխարհում նմանը
չունեցող հոյակապ Մատենադարանի գոյու-
թյան, որի կազմակերպման գործին իր մե-
ծագույն մասնակցությունն է բերել նա: Հայ
հոգևորականությունը հպարտ իր ազգօգուտ
ձեռնարկումներով, այսուհետև ևս պետք է
ջանն շխնայի և նպաստի հայրենի հոյա-
կապ քանդարանների հարստացմանը նորա-
նոր արժեքներով: